

0583

I. 4



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ք. ՏԱՐԻ ԹԻՒ 1

ՀԵ ԿԻՐԱԿԻ

1 ՅՈՒՆՈՒԱՐ 1906

Կ. ՊՈՒՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՒԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ	
Տարեկան	50 Ղրշ.	Տարեկան	54 Ղրշ.	Տարեկան	42 Ֆր.
Վեցամսեայ	25 ,	Վեցամսեայ	27 ,	Վեցամսեայ	6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՅՈՒՆ

ՄԷՆ ՏՆԵԱԿ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պէյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկու ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինքպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարսա

ԱՐՏՕՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Դ. ԱՎԱԾՈՐԻԱՆ) شرکت مرتبه مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի Գաւառի Թիւ 52



Ձեռքի, ուսքի ու ուսքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

« Սնկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ , որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ , ինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տաղաւակի աղբիւր մըն է :

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարի լագործութեանը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ :

Սինկերի մեքենաները կը ծախոին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ :

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|--------|--|
| ԲԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ . |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը . |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ . |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՍԱՐ | Զարչը Պօյու , թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ :

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա , Մեծ փողոց , թիւ 343 եւ
343 կրկին , Տիւզդուլուի տունը :

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնադրուած 1860 իւնի վիճէն



ԿԵՆՏՐՈՆԻ ԶԻՒՂ

Իրաւագոյնի եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԲ

ՀՐԴԵՂԻ ԶԻՒՂ

Իրաւագոյնի եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԲ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք , ապրանք և
կարասիք :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը
մարդկային կեանքի վրայ :

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ , ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ , Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս , Ալեանաք խան , թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիւզոր Աերկայացուցիչ

Գ. Ֆ Է Ր Ա Տ Յ Ա Ն



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. Կար

թ. ՏԱՐԻ ԹԻԻ 1

Կ Ի Ր Ա Կ Ի

1 ՅՈՒՆՈՒԱՐ 1906

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յայտարարութիւն արտօնատրիւն. — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ. Հնքերցողներուն. — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. Հանրագիտակի նոր հրատարակութիւնը. — Մ. ՊԱՊՕՆԵԱՆ. Հանրագիտակի բացառիկ թիւ Կաղանդի առթիւ: Բրոնիկ. (Թաշանձեան եւ Հայկանոյշ Մարք, Մ. Հայրապետ եւ պատրիարքարան): Յ. Պարոնեան ֆինիսագէտ: Տոյարներու աշխարհէն (Ամերիկայի բասրոնները): Պարզ խօսքեր (Օմեդա). — ՍԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆԻ: Գրական ասուլիսներ (ապիկար ֆենադասները). — ՄԻՀՐԱՆ ԻՍԳԻՐԵԱՆ: Բոնայակգը (առ սեւ աշուիւն). — Յ. ԱԼՓԻԱՐ: Տարեգիտոյ խօսքեր. — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Խեղացի եղբոր պատասխանները: Օխը ռախի. — Գ. Փ.: Կաղանդ եւ բարեկալութիւն (Ժողովրդական բանաստեղծութիւն). — ԵՐՄՈԳ ԳՈՒԹՈՒՄՃԵԱՆ: Շարքուն յուրեր:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՏՕՆԱՏԵՐԻՆ

1905 տարիէն սկսեալ «Հանրագիտակ»ի խմբագիր-տնօրէն կարգած էի, ըստ իր բաղձանաց, փափազեան Վահան Էֆէնտին — ծանօթ երգիծարան ու զաւեշտագիր — որ, հինգ տարի, ինչպէս «Լոյս»ը, որուն կրօնաթերթի վերածուելէն վերջ, շարունակէր նոյնպէս և «Հանրագիտակ»ի հրատարակութիւնը կանոնաւորապէս, ըստ իր կարողութեան ու գիտութեան, զոր շատ լաւ գնահատած են իր բոլոր ընթերցողները:

Տարի մը շարունակելէ վերջ, անձնական ծանր զբաղմունք պարտաւորեցին զինք, որ, թերթիս խմբագիր-տնօրէնի պաշտօնէն հրաժարի: Այժմ «Հանրագիտակ»ի Տնօրէն-խմբագիր կարգած եմ Մ. Էֆ. Պապոնեան, փափազեան Վահան Էֆէնտի տեղ. որ խոստացած է այսուհետեւ շարունակել իր աշակցութիւնը, իբրեւ պատուական յօդուածագիր:

Սոյն կարգադրութեամբ, կը հաւատամ թէ «Հանրագիտակ»ի կանոնա-

ւոր ու արգիւնաւոր հրատարակութիւնն աւելի լաւ երաշխաւորած, և թէ ընթերցող Հասարակութեան լաւագոյն ծառայութիւն մը մատուցած եմ:

Նոր տարւոյն առթիւ՝ շնորհաւորելով «Հանրագիտակ»ի նորընտիր Տնօրէն-Խմբագիր Մ. Պապօնեան էֆէնտին, որ պիտի արգարացնէ ամէնուս կողմանէ իրեն նկատմամբ ցարդ կազմած ձեռնհաս հրապարակագրի վստահութիւնը. կը շնորհաւորենք նաև «Հանրագիտակ»ի ընթերցողները, որ նոր տարիէն ըսկըսեալ աւելի խնամեալ և գրական շատ մը անմրցելի առաւելութիւններով ճոխացած շաբաթական ընթերցարան մը ունենալու նոր ուրախութիւնը պիտի ունենան:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ
ՏԵՐԸ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ



Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ն Ե Ր Ո Ւ Ն

Ինչպէս գիտեն մեր ազնիւ ընթերցողները, գրեթէ հինգ տարիէ ի վեր անընդհատ կը շարունակէինք հրատարակել նախ «Լոյս»ը և յետոյ «Հանրագիտակ»ը, ընթերցող Հասարակութեան հաճելի ժամանց մը հայթայթելով: Մենք մինչև հիմակ ո՛ր եւ է նիւթական չափ մը ակնկալած չէինք այս հրատարակութիւնէն և մեր անձնական զբաղումներուն ներածին չափ աշխատեցանք առանց ընդհատելու շարունակել մեր խմբագրի պարտաւորութիւնը: Բայց մեր զբաղումները շատցած ըլլալով, դժբաղդաբար կը պարտաւորուինք հրաժեշտ տալ նոր սիրելի ընթերցողներուն, հրաժարելով «Հանրագիտակ»ի Տնօրէն-Խմբագրութեան պաշտօնէն, զոր այսօրուրէն սկսեալ կը ստանձնէ Մարտիրոս էֆ. Պապօնեան, Արտօնատէր Արմէն էֆ. Լուսինեանի հետ եղած կարգադրութեամբ: Մենք միայն պիտի շարունակենք մեր աշխատակցութիւնը, ամէն շաբաթ երգիծական յօդուածներ գրելով:

Մարտիրոս էֆ. Պապօնեան Մամլոյ վաղեմի աշխատաւոր մըն է և ծանօթ է լրագրի ընթերցողներուն իր ձեռնհասութեամբ: Ուստի ուրախ ենք որ կարող ձեռքի մը կը՝ յանձնուին «Հանրագիտակ»ի վարչութիւնը և խմբագրութիւնը:

Պապօնեան էֆէնտի մեզ հետ կնքած հաշուական համաձայնութեամբ յանձնառու եղած է «Հանրագիտակ»ի առաքումը շարունակել ամէն անոնց որոնք վճարած են իրենց բաժնեգինը: Իսկ անոնք որ չեն վճարած, այս թիւէն ետք այլ եւս չպիտի ստանան «Հանրագիտակ»ը մինչև որ իրենց պարտքը չվճարեն Պապօնեան էֆէնտիի:

Յաջողութիւն՝ մեր սիրելի բարեկամին:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ


Ինչպէս կ'երեւի վերոյիշեալ, տողերէն «Հանրագիտակ»ի վարչութիւնը մեզ յանձնուած ըլլալով, պիտի աշխատինք նոյն ուղղութիւնը պահել, աւելի ճոխացնելով թերթին պարունակութիւնը և մեզ աշխատակից ունենալով հրապարակի վրայ ծանօթ դրողներ:

Մեր նպատակը պիտի ըլլայ միշտ զուարթ ֆոգրոյիներով ձաղկել մեր ընտանեկան յուռի բարքերը և ընթերցող հասարակութեան չինիչ և հաճելի ժամանց մը հայթայթել: «Հանրագիտակ»ի ամէն ընթերցող կրնայ վստահ ըլլալ որ ամէն ջանք ի դուրս պիտի դուրս բարոյականի սահմանին մէջ թէ՛ զբօսցնել և թէ՛ հրահանգել:

Այժմէն չափազանց խոստումներ չենք ընել մեր ուղղութեան մասին, զոր մեր յարգելի ընթերցողները պիտի գնահատեն անշուշտ հետզհետէ հրատարակուած թիւերուն մէջ պարզուած տեսնելով մեր ծրագիրը:

«Հանրագիտակ»ի բաժնեգիրն նախորդ Տնօրէն-խմբագիր Վահան Էֆ. Փափագեանի վճարող բաժանորդները կանոնաւորապէս պիտի ստանան իրենց թերթերը, մինչեւ պայմանաժամին աւարտիլը: Իսկ անոնք որ մինչեւ հիմա չեն վճարած անշուշտ կը բարեհաճին անյապաղ փութացնել իրենց բաժնեգիրն, եթէ կ'ուզեն որ թերթերու առաքման մէջ ընդհատում չըլլայ:

Մ. ՊԱՊՕՆԵԱՆ



Մասնաւորապէս կը խնդրենք Հանրագիտակի Պատ. Գործակալներէն որ իրենց գործունէութեան չըջանակը ալ աւելի ընդարձակելով իրենց գընահատելի աջակցութեամբը մեզ աւելի քաջալերել սիրեն:

Նոյնպէս մեր Պատ. Յօդուածագիրներէն կը խնդրուի որք հաճին շարունակել իրենց աւելի խնամեալ գրուածները, նկատի առնելով հետզհետէ թերթիս խմբագրական ուղղութեան մէջ ներմուծուելիք զանազան նորութիւնները ու պէսպիսութիւնները, որոնք անհրաժեշտ են ամէն կարգի ընթերցողաց բազմապահանջ ճաշակները գոհացնելու եւ թերթը աւելի շահեկան ու հետաքրքրական ընծայելու համար:



ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԲԱՑԱՌԻԿ ԹԻԻ

ԿԱՂԱՆԴԻ ԱՌԹԻԻ

Խմբագրական

Դրամոֆիտի սիրոյն համար կոյր գիտութեան ամուսնացողը, կը նմանին տղու մը՝ որուն կաղանդէք կուտան զարմացուցիչ եւ հրապուրիչ տուփ մը, այդ խաղալիքէն հըրապուրեալ տղան սիրայօժար կ'ընդունի զայն. սակայն մինչեւ որ հետը չխաղայ չկրնար գիտնալ թէ մէջինը սատանայ է մի հրեշտակ:

Գիտական

Ռուսըլո արքայ իր հանդարտիկ աշխատանոցին մէջ միջոցներ կը խորհի խուլերուն ձայն լսել տալու համար: Ռուսըլո արքայ գտած է որ «Ձայներու թրթռական սանդուխին վրայ» կանոնաւոր ականջ մը չկրնար լսել իւր Ձէն ասդին (32 թրթռում) եղած ձայները եւ ո՛չ ալ իւր 9էն անդին (32,000 թրթռում) գտնուած ձայները: Տղաք աւելի ձայներ կը լսեն եւ Պ. Կասթօն Բարիի աղջիկը 60,000 թրթռումէ աւելի ունեցող խիստ սուր ձայներ կարող էր լսելու: Սակայն ձայնաստիճանները կրնան 18,000 թրթռում ունեցող ձայներ առաջ բերել, բայց մարդկային ո՛չ մէկ ականջի լսելի կըլլան:

ԴԻՏ. ԽՄԲ.) Գիւտ ըսածդ ալ ասանկ ըլլալու է:

Առեւտրական

Տարւոյն սկիւզբէն մինչեւ վերջը Բարիդ չարունակ ոսկի գնեց:

Անգլիոյ պանգան ալ մեծաքանակ ոսկի ձեռք անցուց:

Գերմանիա եւս ըստ սովորականին ոսկի քաշեց Լոնտոնէն:

Ոսկին ունկին բարձրացաւ մինչեւ 77 միլիոն 11 ու կէս բէնսի:

Անկում չյուսացուիր:

ԾԱՆ. ԽՄԲ. — Այս մարդիկը ոսկին լուրիս կարծած չըլլան:

Քաղաքական

Անգեւզերման յարաբերութեանց բարւոքում մը անպատճառ ֆրանքեւզերման յարաբերութեանց բարւոքում մը յառաջ պիտի բերէ: Փրանքեւզերման յարաբերութեանց բարւոքումի մը արդիւնքը պիտի ըլլայ անպատճառ անգեւզերման յարաբերութեանց բարւոքման մը:

Ծ. Խ. — Այս հաշուով Մարութի խնդրը այժմէն կարգադրուած կը համարուի:

Արտաքին

Վերսալի Բօնկրէին համար, ուր նախագահական ընտրութիւն պիտի կատարուի, մուտքի բոլոր տոմսակները հիմակուենէ բաշխուած են, ձեռքէ ձեռք յափշտակուած եւ հատ մը իսկ չէ մնացած:

Ծ. Խ. — Հանրագիտակի թիւերուն պէս:

Ներքին

Տէտէ աղաճի եւ Լիւէ Պուրկազի միջեւ ջուրերը նորէն ողողած ըլլալով երկաթուղին, Հանրագիտակի թիւերը ուշ պիտի հասնին բաժանորդաց ձեռքը:

Պատրիարքարանէն

Անցեալ կիրակի Սեւանիկի եկեղեցւոյն մէջ, երեք Խաչերու օծման պահուն, հոգաբարձութեան անդամներէն մէկը դպիր մը ապտակելով, գայթակղական միջադէպի մը տեղի տուեր է: Դպիրը ապտակ կերեր է վասն զի հոգաբարձուին կողմէ արգիւտներ է չապիկ հագնիլ: Այդ ապտակահարութեան պատճառաւ եկեղեցական արարողութիւնները դադարեցին:

Օրուան Դեպքեր

Օրիորդ Յարութիւնեան անձնասպան ըլլալ փորձեց լուցկիի ջուր խմելով, յետոյ ցաւին չդիմանալով որոշեց փոխանակ ցաւով մեռնելու, առանց ցաւի ապրիլ:

Զուարճալիք

— Դէմքերուն մէջ ամէնէն աւելի ո՞ր դէմքը կը սիրէք:

— Ինծի փոխ դրամ սալիք մարդուն դէմքը:

— Եւ ո՞ր դէմքը կ'ատէք:

— Այն անձին 87 օրէն ետքի դէմքը:

ՔՐՈՆԻԿ

ԹԱԻՇԱՆՃԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱՆՈՅՇ ՄԱՐԲ
Ս. ՀԱՅՐԱՊԵՏ ԵՒ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

— Աստուած մէկ օրը հազար ընէ, հիմակ ամուսինս մէկ հատ մը բերանը չի դնել կոր, կանուխկեկ տուն կուգայ, վաստկածը տուն կը բերէ:

— Իմ տղաս ալ, առաջ մինչեւ գիշերը 3 գինետուններն էր, հիմա շուկայէն ուղղակի տուն կուգայ, գիտես թէ վրան շնորհք իջեր է: Աստուած բանին գործին յաջողութիւն տայ, կ'ըսեն թէ շատ հեռուն կը գըտնուի եղեր ատ մարդը:

— Հապա՛, անունն ալ Յովհաննէս Թաւշանճեան է: Չեմ գիտեր որչա՛փ ոսկի տուեր է լրագիրներուն, որպէս զի օղիի դէմ յօդուածներ գրեն, ամուսինս ալ Մանգումիին մէջը կարդացեր, ան է, աս է, բոլորովին վազ անցեր է:

— Ատանկ մարդ ալ կը գտնուի եղեր, Աստուծմէ առնէ փառքը: Պետրոսիկս առջի գիշերը հաշիւ ըրաւ, օրը 3 զրուէն տարին 1000 զրուէն աւելի օղիի ստակ կուտայ եղեր, հիմա այդ փարան, վարժապետներուն ի նպաստ սնտուկ մը կայ եղեր, տարուէ տարի հոն պիտի տայ: Ես կեանքս վաստակեցայ, կ'ըսէ, ան կը բաւէ ինծի:

X

— Կանանց յատուկ թերթը կը կարդա՛ս, օրիորդ, ամենքս ալ աշխատելու ենք որ այդ թերթին հրատարակութիւնը շարունակուի: Մեծ անպատուութիւն պիտի ըլլայ կիներուն եթէ անփոյթ գտնուին եւ թերթին հրատարակութիւնը ընդհատուի:

— Ինչ կ'ըսէք տիկին, այդ թերթին ջերմ պաշտպաններէն մէկն ալ ես եմ: Հայկանոյշ Մարք, պատուական աղջիկ մըն է, ես մօտէն կը ճանչնամ գինքը: Իր իտէպն է իր նմաններուն օգտակար ըլլալ, բնաւ չհաշկնկալեր անոր հրատարակութենէն, բաւական է որ ծախքը կարենայ հայթայթել:

X

Տուներու վարագոյրներու ետեւը տեղի ունեցած այս խօսակցութիւնները պատճառ եղան որ սկսիմ քրոնիկներուս շարքը, զոր երեք տարիէ ի վեր ընդհատած եւ բոլորովին վազ անցած էի, վասն զի ծանօթ քրոնիկագիր Արրահամ Այվազեան ուլ երեք տարի է ի վեր վազ անցած էր սաղիմական քրոնիկները գրելէ, վասն զի Թօլայեան բարեկամս երեք տարի է վազ անցած էր դերասանութիւն ընելէ, վասն զի երեք տարի է որ Ստեփան Երկանեան Մանչումէի Իզմիրի թղթակիցը մեներ եւ յարութիւն առեր էր, եւ վերջապէս, վասն զի Չղջատեան վարդապետ երեք տարի է որ իր երէցկիւնը եւ զաւակները կորսնցնելու դժբաղդութիւնը ունեցած եւ երեք օր առաջ պիտի մխիթարուէր եթէ Հիւանդանոց չառաջնորդուէր:

Դառնանք մեր նիւթին: Սա երեք տարւան մէջ, ըստ իս, յիշատակութեան արժանի երկու նշանակելի իրողութիւններ երեւցած են, երկուքին ալ նպատակը մի եւ նոյն ձգտումը ունին, կիներու օգտակար ըլլալ:

Թաւշանճեան հակաքղական յօդուածներով կիներուն օգտակար կըլլայ, եւ Հայկանոյշ Մարք կանանց յատուկ թերթով իր նմաններուն միտքը կը մշակէ: Եւ անիրաւութիւն է ըսել թէ Թաւշանճեան ղեքլամի համար հաստատեց իր մրցանակը եւ Հայկանոյշ Մարք դրամ չահելու համար հրատարակեց իր թերթը: Առաջինը կիներուն օրհնէնքները կը վայելէ եւ երկրորդը կիները կը դաստիարակէ, գոնէ ես այսպէս դատեալու պարզմտութիւնն ունիմ:

* * *

Քանի որ կիներու վրայ կը դառնայ մեր խօսքը, կարծէ յիշատակել հոս տիկին Արեւեանի ամուսնական դատը, որ Ս. Հայրապետ եւ Կրօն. Ժողով, դէմ առ դէմ հանած է եւ վերջնական լուծման մը յանգելու համար բաւական կնճռոտ հանգամանք մը ստացած է:

Ն. Ս. Օծութիւն հրամայած է որ տիկին Արեւեանի պահանջած վերաքննութիւնը տեղի ունենայ, քանի որ ան բողոք կը բառ-

Նայ թէ Կրօնական ժողովը առանց զինքը լսելու դատապարտած է, եւ թէ ամէն օրէնք եւ կանոն իրաւունք կուտան տիկին Արեւեանի՝ իր պատիւն ու իրաւունքը պաշտպանելու համար վերաքննութեան դիմելու։ Ս. Հայրապետը տիկին Արեւեանի այս արդար իրաւունքը մատնանիչ կ'ընէ եւ կը հրամայէ նկատողութեան առնել զայն, սակայն Պատրիարքարանը կանտեսէ, թէ ինչո՞ւ. այս կէտին վրայ է որ Ս. Հայրապետ եւ Կրօն. ժողովը զէմ առ զէմ եկած են։

Տիկին Արեւեան կամ յանցապարտ է եւ կամ ո՛չ։ Եթէ յանցապարտ է վերաքննութիւնը չի կրնար զայն արդարացնել, իսկ եթէ անմեղ է Պատրիարքարանը չի կրնար դատապարտել զայն։

Ս. Հայրապետին հրամանը արդարութեան եւ իրաւանց վրայ հիմնուած է եւ տիկին Արեւեան յաջա ժողովորդեան անմեղ մըն է ցորչափ կը զլացուի իր պահանջած վերաքննութիւնը։

Յ. ՊԱՐՈՆԵԱՆ ՔԻՄԻԱԳԻՏ

Լուսահոգի երգիծաբանը կինը տարալուծելով հետեւեալ արդիւնքը գրտեր է։

Արտասուք	20
Քօլքրէմ	10
Գոռոզութիւն	10
Օ տը քօլօններ	9
Նախանձ	15
Լաւանտա	7
Ուղեղ	1
Կարմիր որդան	5
Սալոր	8
Բամբասանք	12
Պարապ խօսք	4

100



ՏՈԼԱՐՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԷՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹԱՏԵՐՈՆՆԵՐԸ

Հիւսիսային Ամերիկայի հարստութեան մասին ճշգրիտ գաղափար մը կազմելու համար՝ Ամերիկայի թատրոններու համար ծախսուած գումարը կը բաւէ գիտնալ։ Ամերիկայի մէջ, մօտաւորապէս երեք հազար թատրոն կայ, որոնց ամէնն ալ հոյակապ ու շքեղ շէնքեր են։

Նիւ Եորքի Օբէրա թատրոնը 15 միլիոն ֆրանքով շինուած է. դարձեալ նոյն քաղաքին մէջ Գրիթէրիւմ եւ Նուվէլ Ամըսթէրտամ թատրոններուն իւրաքանչիւրին 10 միլիոն ֆրանք ծախսուած է։

Վեցերորդ Պողոտային մէջ գտնուած Իւրօթրօմ թատրոնը 17 ու կէս միլիոն ֆրանքով մարմնացած է։

Այս թատրոններուն համար ծախսուած գումարն ալ պատկառելի թիւ մը կը ներկայացնէ։ Իւրաքանչիւր հեղինակութեան համար, միջին հաշուով մը, 12000—25000 ֆրանք ծախք կ'ըլլայ։ Իւրաքանչիւր թատրոն, յաճախ չաբաթական 110 հազար ֆրանք հասոյթ կը բերէ։

Հաշուուած է որ Թատերական եղանակին, 33 չաբաթ, Նիւ Եորքի թատրոնները 177, Շիքսկոյի թատրոնները՝ 36, Ֆիլատէլֆիայի թատրոնները 8 միլիոն թատերաւուծ կուենան։ Հիւսիսային Ամերիկայի ժողովուրդը թատրոնի համար տարեկան 160 միլիոն ֆրանք կը վճարէ։



ՊԱՐԶ ԽՕՍՔԵՐ

ՕՍԵՂԱ

Պակաս քրիմից կամ անզլ. ոսկի քշելը եւ կրթ. պաշտօնեայի մը իրաւունքէն երբեմն «ա՛նկ կտորիկ մը բռն զեղչելը գործնական ոգիի օմեղան է մեզի համար:

Այս կարծեցեալ գործնականութիւնը, անհատական շրջանակի մէջ տակաւ ընդհանրանալէ ետքը, մեր հանրային բարքերուն մէջ ալ մուտ գործած է դժբախտաբար: Անհատ մը կրնայ գործնական ոգիի ըմբռնումին մէջ զեղծանիլ եւ իր խառնուածքին համեմատ մինչեւ զձգուածութեան երթալ ի վնաս իրեն, բայց հանրային մարմնոյ մը ներքի չէ ազնուութենէ հեռանալ եւ ամէնէն նուիրական զգացումները իսկ չհագործելու զիջանիլ:

Ս. Պատրիարքին ողբացեալ քրոջ յուշարկաւորութեանը առթիւ, թաղային Աղքատախնամներէ ոմանք ծաղկեպսակներ զըրկած էին իրրեւ ցաւակցական արտայայտութիւն: Եւ արդարեւ պարտաւոր էին զրկել, որովհետեւ հանգուցեալ Տիկնոջ Ամենապատիւ եղբայրը ա՛յնքան սիրտ հատցուցած է Աղքատախնամներու բարոյք կազմակերպութեան եւ տնտեսութեան համար: Բայց մինչ այս ծաղկեպսակները հանգուցեալ Տիկնոջ հոգակոյտին վրայ պէտք է ձգուէին իրրեւ վերջին յարգանք մը, ընդհակառակն Աղքատախնամները նորէն չալկեցին իրենց բերած պսակները ու ետ դարձուցին, ուրիշ ննջեցեալի մը առթիւ չհագործելու համար զանոնք: Երբեմն ալ այս Աղքատախնամները չեն քաշուիր ու եկեղեցիին դուռնէն ետ կը դարձնեն իրենց պսակը, որուն վրայ կարծես կը գուրգուրան հասութարեր կալուածի մը պէս:

Ահա այս ընթացքին, այս սխալ իմացուած գործնականութեան դէմ է որ կը բողբենք, որովհետեւ անոր մէջ կը տեսնենք ցաւակցական արտայայտութիւնները չհագործելու զձուձ եւ կեղծաւոր մտածում մը: Ծաղկեպսակը ցաւակցական քարդի մը դերը չի՞ կատարեր: Լա՛ւ: Ո՛րքան անհեթեթ պիտի ըլլար եթէ մէկը այդպիսի քարդ մը

զրկէր ննջեցեալի մը տիրոջ ու յետոյ ե՛տ առներ զայն:

Եթէ Աղքատախնամները չեն ուզեր ծաղկեպսակի համար իրենց վճարած 20-30 զրոյ կորսնցնել, թո՛ղ ուրիշներուն վիշտը հրապարակաւ չհագործեն ուրեմն այսպէս, եւ թո՛ղ իրենց ցաւակցական արտայայտութեան եղանակը փոխելով, քարդ մը միայն զրկեն, ինչպէս արդէն կ'ընէ Հիւանդանոցի վարչութիւնը:

Դո՛նէ մեր հանրային կեանքին մէջ ազնիւ ըլլանք:

ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆԻ

ՊԻԱԿԱՆ ԱՍՈՒԼԻՄՆԵՐ

ԱՊԻԿԱՐ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ

Գրե՛լը՝ դիւրին է, արուե՛սն է դժուար: Այս ճշմարտութիւնը՝ ամեն ժամանակներէ աւելի, մե՛ր օրերուն արդարացաւ:

Արտադրելու համար՝ տաղա՛նդ ու ձի՛րք ունենալու է ապահովաբար: Անամեջ միտքերու քերական ապուրը չե՛ տսիկա:

Շատերը գրե՛լ կը փափափին՝ անուն հանելու կամ . . . անուններ աղարկելու համար: Ուրեմն ի՞նչ ընեն: Պա՛րզ քան մը. ուրիշներու անձին կամ արտադրածին վրայ կը խօսին: Հազուադիս բացառութիւնը մե՛կդի, ասոնք՝ Արիստարգոսի այլատեսած թոռնե՛րը պիտի ըլլային:

Թե՛ւ արուեստին վրայ շեմքնորհի գաղափար մը չունին այդ խեղճերը, սակայն հո՛գ չէ. ասո՛ր ալ միջոցը կը գտնեն: Կան խապէս կատարուած փորձեր կան, ուրիշ կրկան փաղե՛լ գաղափարներ, փաստեր ու վճիռներ: Կոկելու շնորհը կ'ընէ հարկաւ . . . խմբագրապէ՛սը: Տառախալներու արքայգութեան հոգն ա՛յ՝ սպագրասան proteկտուն վի՛զը . . . :

Ու . . . յօդուածը կը սպուի՛, ուր արժանիքներ կուրացուին ու ոջնջութիւններ կը փառաբանուին՝ երբեմն պատահաբա՛ր, բայց յաւե՛ս չարաւտօրե՛ն:

ՏԱՐԵԳԼԽՈՅ ԽՕՍՓԵՐ

Ահա աչքառու անցք մը, զոր կը յիշատակենք 1905 տարւոյն վերջակէտէն առաջ անթոր թառանքեզ:

Հանրագիտակ, որուն հրատարակութիւնը ստանձնած էի տարի մը, յանձնեցի Մարտիրոս էֆէնտի Պապօնեանի, որուն ձեռնեցութիւնը խմբագրական եւ վարչական գործերու մէջ, ծանօթ է ամէն անոնց՝ որոնք ասկէ 5—6 տարիներ առաջ հետեւած են ԼՈՅՍԻ, որ այն ատեն իբր վուարթ չաբաթաթերթ կը հրատարակէր Զիւմպիւլի խմբի մը քրտած խորշերուն մէջ:

Թէ ինչո՞ւ չի շարունակեցի:

Գիտեմ թէ՛ ամենուր տէրտը աս պիտի ըլլայ, գիշերը գուլպաներով պիտի պառկիք եւ փոխանակ ֆռանճէլայի՝ քալէթա պիտի ուտէք, բան մը որ ստամոքսը չի յոգնեցընէր, եւ լալլաճա հացէն աւելի սննդաւոր է եւ դիւրամարս:

Թէ ինչո՞ւ չի շարունակեցի:

Այդ չէ՛ Զեր գիտնալիք բանը, քանի որ հասուկ աղջկան տէր հայր մը (ոչ թէ Տէր-հայր մը) իր հոգեհատորը որու որ կուզէ անոր կուտայ, ու բնաւ փողոցները չիյնար կարծիք ժողովելու համար, այլ կը հարցնէ կը փնտռէ, եւ անգամ մը որ լաւ գաղափար մը կրցաւ կազմել փեսին բարոյականին, նիւթականին վրայ (ֆիզիքականը շատ չի փնտռուիր այս տեսակ պարագաներու մէջ), այն ատեն պսակի արարողութիւնը կը կատարէ եւ նորապսակ ամուսնիքը իրենց առաջատի սենեկէն դուրս ելլալէ վերջ միայն կը տարածուի սա լուրը թէ՛ այսինչը այսինչին հետ ամուսնացեր է:

Նոյն բունը պատահեցաւ Հանրագիտակին ալ, Մարտիրոս էֆ. Պապօնեան, մէկը՝ որ տղայ տարիքէս կը ճանչնամ, փափաք յայտնեց Հանրագիտակը հրատարակելու, եւ որովհետեւ գործերս, անձնական զբաղումներս չէին հերեր անորոշեալի, թէ՛ խմբագրութեան, եւ թէ՛ վարչութեանը հոգեմ ու ջանքերունակեմ, ուստի համերաշխաբար իրեն յանձնեցի գործը, պայմանաւ մտաւ զայն:

մէկքսոյց ամսեւ զի ... դմադքսոյցս

ման մը որ Պապօնեան էֆէնտին պընդեց եւ խնդրեց — ապահովեմ աշխատակցութիւնս ամէն շաբթու, ի բաց առեալ այն շաբթէն . . . որ գիս չորս ուսի վրայ հանեն եւ ազգականներս փոխանակ ետեւէս գալու, արկղիս շուրջը բոլորած իրար կզեն, մէջի 7 1/2 դրշ.ը բաժնելու համար, իբրեւ արդար ժառանգ բազմավաստակ գործունէութեանս, լրագրական շիրին ասպարէզին մէջ:

Չէ՞ք հաւատար խոստովանութեանս, կարդացէք քիչ մը վարը նոր թերթին նոր յօդուածը:

ՆՈՐ, ՆՈՐ, ՆՈՐ, նոր, միշտ նոր, այս է ամէնուս բերնին ձուլը, զոր կը ծամծըմենք տարին տասերկու ամիս: Նոր տարի, նոր գրականութիւն, նոր հագուստ, նոր գլխարկ, նոր կօշիկ (սրածայր), նոր եկեղեցական երգեցողութիւն (քառաձայն), նոր, նոր, նոր, բայց այս նորերուն մէջ երեք նորի փափաքներ կան, որոնք չեն կրնար օգտակար ըլլալ եւ ոչ ալ յարգելի նոր բարեկամութիւն, նոր գինի, եւ նոր կին:

1906ի դրան առջեւ, ամէնքս ալ պապուկներու պէս, ձեռք բացած ենք այս օր, ի խնդիր նորին, նոր լաթ կուզենք, նոր ճիճի եւ որ աւելին նոր վաստակ:

Տարւոյն չորս եղանակներուն մէջ չկայ արշալոյս մը՝ որ այնքան անուշ ծագի, որ չափ կազանդինը, քանի որ անիկայ յոյսը ունի իր հետ, ընտանեկան անդորրութեան, ապրուստի, վաստակի, յաջողութեան յոյսը, առատաբուխ նուիրատուութեան յոյսը, որոնց կսպասենք առտուն կանուխ. մոմի, կազի լոյսով եւ յուսով:

Նոր տարւոյն առաջին օրին, մի կարծէք թէ միայն պզտիկները, տղաքներն են որոնք խաղալիքի կամ ու եւ է նուէրի մը կըսպասեն իրենց ծնողքէն, կամ պե՛տքերէն: Անդին չափաւորապէս կըսպասեն զրադիրներէն, ու . . . չմի միմե

րոնք իրենց բաթռոնին աչքին լոյսը կառնեն, այնքան մէջը կը նային այդ օրին, ամսականի յաւելումի համար: Մագերուն մէջ ձին ցանցնուած օրիորդներ կան, որոնք այդ օրուան, այսինքն տարեփոխին կսպասեն, մէկուն թեւը մտնալու յուսով: Տարիներու չղթայակապ նշանածներ կան, որոնք նոր տարւոյն արշալոյսէն կսպասեն ամուսնանալու եւ նշանածութեան շապիկը փախելու յոյսով: Վաստակաբեկ վարժապետներ կան, որոնք այդ օրին կսպասեն, ոչ թէ ամսականի յաւելման՝ քաւ լիցի, այդ բանը մըտքերնուն չ'անցնիր, այլ, դիզուածներէն մաս մը բան կորզելու համար:

Վերջապէս, մեծերը պզտիկներէն ալ աւելի յոյսով կսպասեն այս նորածին տարւոյն իրենց ժանգոտած ընտանեկան յաջողութեան մասին ունեցած յոյսերը իրականացեալ տեսնելու համար:

X

Պատկերներ, կաղանդէն առաջ:

Երեք տարուան նշանած միւսիւ մը, չորեքշաբթի գիշեր նշանածին տունը կը մընայ ... իբր թէ տեղացող անձրեւէն, հակառակ շաւտիկ եւ մոռաւսի ունենալուն:

— Ծօ՛ տղայ, ի՞նչ է կէնէ հինտիի պէս քիթդ կախեր ես, ի՞նչ է նէ ըսէ ...

— Էօ՛ֆ ...

— Կլոխդ կը ցաւի կոր նէ բաթաթէս կապեմ ...

— Բի՛ւֆ ...

— Սանճի՛ կընես կո՛ր նէ լաբա մը զարնեմ փորիդ ...

— Ու՛ֆ ...

— Ակռա՛դ կը ցաւի կո՛ր նէ պէռպէռին խապար ընեմ ...

— Ը՛նհ ...

— Էյ ըսէ ծօ՛, աղջիկս ալ մեռաք կընէ կոր, սա հալը նայէ, մոխիր կըյրեցաւ ...

— Բան մըն ալ չունիմ ... նեղութիւն իչտէ ...

— Նեղութիւն ունիս նէ հոգդ ... քենէ փարա ուզող չիգա՛յ եա ... չօգ չէյ ...

— Սիրտս նեղ նէ մարիկս ... սիրտս ... նայէ վաղը կաղնդ է ...

— Պէճճին իլէն սախան թող մոմտան, մեզի՛ ինչ ...

— Ճանըմ ատանկ օրի պէտքը չէ՞ քի ...

— Հասկցայ ամա, օխճութիւն, ի՞նչ ընենք էօլիւմ չէ՞ եա ... Աստուած ողորմած է ...

— Ի՞նչ սանքի ... նամուսէս կետին տակը կասնիմ կոր, ես ինչո՞ւ Գոհարիկին էլմաս մը հետիէ չընէի ...

— Աստուած ողորմած է ըսինք եա՛ ... Գոհարիկը անտեղուանքը չէ, կեցիր նայիմ ...

— Իմացողը ի՞նչ կ'ըսէ, խօսք կ'առնէ միւսիւն ձեռքի սիկառը աչքին մօտ բռնելով, որպէս զի արցունքոտի ...

Նոյն ատեն տիկինը դուրս կ'ելլայ սենեակեն, ու քիչ վերջը ներս մտնալով,

— Ինձի նայէ քու նամուսդ իմս ալ է օղուլ, անէքի փեսայ պիտի ըլլաս նէ, պէտք է քի իրար խօռումիչ ընենք, թէքլիֆ չունինք եա ... , նա սա մատնին առ քիչ մը ճիլա ընել տուր, հինգնոց խութիի մը մէջ դիր տէ, ան իրիկունը առ պեր, հոս ալ միսաֆիր ըլլայ նէ, ճախալը մը մատը կ'անցունես ամօթդ կը կոցուի ...

— Ճանըմ աս ըլլալիք բան է մարիկս ... ա՛խ ... ըսելով կը գրպանէ մատնին եւ հոգեբը կը փոխուին, ամպերը կը փարատին եւ ուրախութեան պայծառ արեւը միւսիւն դէմքը կը լուսաւորէ:

X

Ոսկերչաց շուկայէն:

Գլխարկը անձրեւէն խխում, բէշերը սոթթուած, ցեխաթաթախ մայր մը իր աղջկանը հետ, ապուշ ակնարկներ ձգելով չորս դին, շուկայէն կ'անցնի:

— Գուզում խուլումճի աղասի, կաղնդի համար տղուս նշանածին հաֆիֆ զարիֆ պան մը առնել կ'ուզեմ կոր ամա, կը վախճամ կոր ...

— Մարիկս, կը վախճաս կոր նէ հետդ մահալլէ պէճճիսին առնէիր կըսէ ոսկերիչ մը խնդալով,

— Ամա ըսին քի, խուլումճի չարշիսին մարդը տինտանին թէբէն կը հանեն, տէյի ... քալէ քա թաղուկ ...

— Հրամմեցէք տուտու, մենք ալ ունինք կաղնդցուններ ... կը ձայնեն չորսդիէն:

— Քա ինչո՞ւ տուտու պիտի ըլլամ, տասնըութնիս մէջը կարգուէր, պոյիս հետ պարապար վաւկի տէր եմ եղեր, մեղայ ... լախըտընիդ գիտցէք տէ անանկ ճուղապ տուէք ...

— Շատ լաւ, տիկին, հրամայեցէք ...

— Հա չէոյլէ, ըսելով ներս կը մտնան:

— Ի՞նչ տեսակ բան մը ըլլայ, տիկին ...

— Սանկ հաֆիֆ, իշտէ կիտէք ես, պըռչի պէս պան մը ...

Բաւական թիւով պըռչներ կը շարեն, որոնք ձեռքէ ձեռք կ'անցնին, լուսին կը տարւին, փորձեր կ'ըլլուն:

— Գուզում խուլումճի աղասի, տղուս նշանածը քիչ մը ... քիչ մը, չէ, էբէյիճէ, հիմա սըտեղը մարդ չիգայ ես' ... էսմէրճէ է, սանկ երեսին վայլում պան մը ըլլար ...

— Սա ինտո՞ր է ... ըսելով ապրանք մը ցոյց կուտան ...

— Ը՛նհ ... գէշ չէ ամա չիյտեմ քի երեսին կ'երթայ' ...

— Մարիկա, երեսին երթալը նայիս նէ, իւստիւպէճէն պալխա պան մը երեսին չերթար ...

— Էյ, տղաս, զահէր բիւսբիւթիւնէ էշ էր ... նէ' միւնքիւն քի երեսը պան քսել տայ, էսմէր է ամա, քէսէլէմիշ ընես նէ պուտիկ մը պան չելար ...

— Խաս է եղեր, տիկին, խերը տեսնաք, էյ չէնէ սա տանք, ուրիշ մը կը ցուցնեն ...

— Ֆիյաթճա նասըլ ե՛նք ...

— Հինգ ոսկի տիկին, ան ալ ձեզի համար ...

— Վայ ... քա ի՞նչ կ'ըսէ, մեղայ է տէր ... Յիսուս Քրիստոս ...

— Հասկըցայ, ան է քի աղօթքի ելաք նէ, ասկէ կ'ելաք շիտակ Ղալաթիայի Ժամը կ'երթաք, հոն աղօթքնիդ կը Թամամցունէք, անկէ շիտակ վեր ճամ էլմասներուն խանութը կ'երթաք, հինգնոցը կուտաք գործերնիդ կը տեսնաք, հէմ ան ճամերը էսմէր չէ քի խուզղունի ըլլայ նէ ըճԸԸ ԸճԸԸ կուգայ ...

X

Առանին պատկեր:

Մեր մէջ սովորութիւն է, կաղանդի գիւլերը՝ ընտանեկան շրջանակներու մէջ, սենեակը զարդարել պզտիկ գոյնզգոյն մոմերով, ու սեղանն ալ տեսակ տեսակ մրգեղէններով, որոնց չուրջ կը բոլորուն ընտանիքի անդամները, ու կ'սկսին ճաշակել համադամները:

Ասիկայ նոր բան մը չէ որ ըսի, ոչ ալ ասով բազմակնճիւ գաղտնիքի մը վարագոյրը բացի, նպատակս նկարագրել է այդ գիւլերուն պատկեր մը, զոր օրը օրին կրնայ հաճոյալի քրքիջներ քաղել ամէն անոնցմէ, որոնք պաշիկը պաճիկէն աւելի կը սիրեն:

Ժամը հինգը քիչ մըն ալ կ'անցնի: Գըզտիկները յափառացած կերուխումն, ու մեծերն ալ առաւօտուն կանուխ մոմի լոյսով արթննալու փափաքէն, տակաւ կը քաշուին, ու սենեակը կը մնայ աղապային ու նինէին, որոնք գոգցես չուզելով կանուխէն սկսիլ վաղահաս մշտնջենական քունը, մէկ մէկ անկիւն կծկուած իրարու երես կը նային, մինչ մոմերը հատած, միմիայն մէջտեղի կազը կը լուսաւորէ սենեկին ամբողջութիւնը:

— Հէ՛յ կիտի օրեր հէ՛յ, խօսք կ'առնէ աղապան, յօնքերը վեր առնելով, գիտե՞ս, կընիկ, ասանկ կաղանդի գիւլերներ բիւթիւն կը հագուէինք կը չքուէինք տէ ամէնուն ձեռքը պագնելէն ետքը օտանիս կը քաշուէինք ...

— Ը՛նհ ... ո՞ւր են ատ կէնճութան օրերը քի' ... խոզ կը հոտինք կոր ալթըխ:

— Քեզի պան մը ըսեմ, կընիկ, քիչ մը առաջ ճահիլները իրար կը պագնէին կոր նէ, ի՞նչ մեղքս պահեմ, պերնիս ջուրերը վազեց, վազե՞ց ամա' ...

— Ամա՛ն դուն ալ ... տահա պան կա՞յ նէ ըսէ, հայտէ տարեգուլսուն կանուխ կը պառկին:

— Աս ալ ասանկ օր մըն է, տարի կըլի է իշտէ:

— Ես կ'երթամ կոր:

— Քա եկո՞ւր քա' ... պաշիկ մը ...

— Խեղբի՛դ եկաւ, մարդ ...

— Էյ բէք խըյանէթ ես քա, իրարու

հիշ պան ըսելիք չունինք, իմ տուտախներս չոր, բուկին երեսներդ ալ թոմած . . .

— Անանկ է ամա, բիլիճի միս է անիկայ . . .

— Կեցիր նայիմ թէ ռիկնե՞րս ուր են տեր են . . .

— Էյ խըյանէթ ես եղեր քա կընիկ, ասկէ տասը տարի առաջ ասանկ չէիր ըսէր կոր ամա :

— Խողերուն հետ պագտուինք նէ տահա աղէկ է . . .

— Մէկ պաչիկ մը քա :

— Էյ կայնէ բէրտէները վար քաշեմ տէ անանկ, ըսելով վարագոյրները կը քաշէ եւ դողդոջ քայլերով ամուսնոյն կը մօտենայ, ու իր կարգին կմախք թեւերուն մէջ առած իր ծերուկ ընկերուհին՝

— Ըն . . . հ . . . շ . . . ա՛ . . . ր . . .

Անկեղծ ամուսնոյ եւ ճշմարիտ սիրոյ այդ բաղձացուած համբոյրը վերջակէտը կ'ըլլայ իր կեանքի հատորին, զոր կը դրոշմէ իր է՛ն սիրած կողակցին, կեանքի ընկերուհիին դէմքին վրայ . . . :

Աղապան սրտի կաթուածով մը վերջ կուտայ կեանքին, ճիշդ այն պահուն, երբ սիրոյ անարատ համբոյրը կը դրոշմէր կընկանը այտին :

X

Առաւօտեան դէմ, դեռ լոյսը չի ճեղքուած, դրացի տունէ մը ձայն մը կուգայ ընդ աղօտ՝

— Ունզա՛յ . . . ունզա՛յ . . . ունզա՛յ . . .

Զաւակ մը ծներ է մայր մը, որ առջի օրուրէն ի վեր ցաւեր կը քաշէր :

Ու կը մտածեմ :

Հրաժեշտի համբոյրը տուաւ ծերուկ 1905ը եւ մինչ անդին 1906ը իր առաջին ողջոյնը կը պարգեւէ բնութեան, գոչելով՝ ՆՈՐ ՍԷ՛Ր ՆՈՐ ԿԵԱՆՔ, ՆՈՐ ԱՐԵԻ :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ



տպագրւած է Երևանի «Գրական» տպարանին կողմէն

ԽԵԼԱՑԻ ԵՂՐՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

— Բարիդի մէջ էն առաջ ո՞վ եւ ապուց կաթսան :

— Կրակը :

X

— Ինչո՞ւ Պետրոս իր տանը մէջ բաղնիք մը չի նեւ տուաւ :

— Վասն զի չէր կրնար բաղնիքին մէջ չինեւ տալ իր տունը :

X

— Ինչո՞ւ հովը աւելի պաղ է ձմեռը՝ քան թէ ամառը :

— Վասն զի բնաւ մէկը թոյլ չտար որ ան տուններուն մէջ մտնէ, այնպէս որ դուրսը պառկելու ստիպուած է :

X

— Ինչո՞ւ համար արեւը այնքան ուշ կ'ելնէ ձմեռը :

— Վասն զի ձմեռը այնչափ ցուրտ է որ, ան կը դժկամակի առտուն կանուխ ելնելու :

—

— Պարոն, դուն անմիտին մէկն ես :

— Դուն ալ տխմարին մէկը :

— Պարո՛ն, պէտք է գիտնաք թէ այդպիսի նախատինքի մը չեմ կրնար համբերել :

— Նոյնպէս և ես պարոն :

— Բայց պէտք է գիտնաք թէ հազար անգամ կ'ուզեմ մեռնիլ, քան թէ այդպիսի նախատինքի մը համբերել :

— Բայց պարոն, դուք ալ պէտք է գիտնաք թէ մարդ մէկ անգամ միայն կը մեռնի :

X

ՕՒՏԸ ՐԱԽԻ

Հակալքօրական պայքարը ժամանակ մը մղուելէ, եւ խեղճ օգին ու գինին չարաչար հալածուելէ ետք, այսօր Բագոսեան ուխտին միաբանք անոր յիշատակը կը տօնեն, եօթն անգամ եօթը եւ աւելի գաւաթներ օղի պարպելով:

Մէփիստոփէլ, մեր վաղածանօթ բարեկամը, կըսէ մեզի թէ՝ հոգւով ու մարմնով աւքօլամորութիւնը նշովող եւ թերթերու մէջ գինին ու օղին իբր սադայելի արիւն ցոյց տուող գրուածներէն յորդորող եւ խրատուող կարգ մը մարդիկ այսօր եօթն ռախիի յիշատակութիւնը կ'ընեն այնքան ջերմեռանդօքէն որ հաշիւներն մոռնալով կը պարտաւորին իրարու հարցնել:

— Եղբայր Թորոս, քանի՞ հատ եղաւ, ամա՛ն չափը չանցընենք:

— Դեռ բան մը չէ, 40-50 հատ:

— Չըսե՛ս, շիշի հաշւով դեռ 2-3 չիշ, չիտակը ես տունները այցելելէ, գէրտէ, բէլ-թէ ուտելէ եւ օղի ճնկելէ ձանձրացայ, եկուր մօտերս տեղ մը նստինք փորերնիս կշտացնենք, գիշերուան վեցէն ի վեր բերաննիս բան մը դրած չենք:

Եւ երկու բարեկամները համակամ եւ համախորհուրդ կը մտնեն գինետուն մը եւ կ'անցնին կը բազմին բոլորակ սեղանի մը շուրջը:

— Պագսանա՛ պանա, մասթօր Տիւմօ,

— Պուլուրուն,

— Պիպէ 100էր տիրէ՛մի՛ք իբի չիշէ, պիրի՛ մաստիքա օպիրի տիւզ, էյիսինտէն,

— Ամէսօս, պասգա՞ ...

— Մէպէ օլարագ տօմուզ բասթըրմասը, սիեահ խավեար սալաթասը, գառնըմըզ տաաճ, պիր օգգա տա ուսկուսրու ալմալը, կիւզէլ ըսկարասընը եարմալը, էմր էթտի-յիմիզ գէման կէթիրմէլի:

Ստորագասեալ պաշտօնեաներէս մին լուր բերաւ ինծի թէ՝ երկու բարեկամաց մին հակալքօրական պայքարին մէջ մոռնող եւ թերթերու սիւնակները գրուածներով լեցնողներէն մէկն էր:

• • •

Մէփիստոփէլ Լիւլիփութէն վերադարձին՝ փափաք զգացեր է Նիւ-Եօրքէն անցնիլ, եւ մարմնոյ աչօք տեսնել այն մեծ անձնաւորութիւնը, որ միլեառներով կինէ ծախսելն աչքն առնելով փորձ փորձեց Բագոսի մեհեանները փակել եւ քուրմերը հալածական վանել:

Լատինացւոց կաղանդին օրն էր, երբ հասայ, կ'ըսէ, Նիւ-Եօրք, եւ չիտակ ծանօթ մեծ անձնաւորութեան բնակարանը գացի, եւ խնդրեցի դռնապանէն որ զիս իր տիրոջ ներկայացնէ:

— Հոս չէ, տարեգլխի առթիւ բարեկամաց այցելութեան կը պտըտի, երկու ժամ վերջը եկէք:

Այս միջոցին, կ'ըսէ Մէփիստոփէլ, ներսէն մազոտ մօրուօք մարդ մը դուրս ելաւ:

— Ո՞վ էք հրամանքնիդ, ձեր ձայնը ինծի ծանօթ կը թուի, եւ ուշադրութեամբ երեսո նայելէ ետք, դուք չէ՞ք այն ազնիւ Մէփիստոփէլը, որուն հետ մէկտեղ ասկից 140,000 տարի առաջ Բաբելոնի աշտարակն այցելեցինք եւ իրարու լեզուէ չի հասկցող եւ այս պատճառաւ իրարու զլուխ պատռելու չափ առաջ գացող ամէն աստիճանէ ու տարիքէ մարդոց վրայ կուշտ ու կուռ խնդացինք:

— Այո՛, բարեկամ:

Եւ թեւս մտնելով զիս ներս տարաւ:

Սըկէ նըկէ խել մը խօսքերէ ետք, ծառայ մը ներս մտնելով քառթ վիզիթ մը յանձնեց բարեկամիս:

— Հա՛, հասկցայ, գնա՛ ըսէ՛ որ պատրաստ եմ, թող հրամմեն գան, ո՛ր ատեն որ կը հաճին:

Ծառան դուրս ելաւ:

— Ուրեմն ըսի, ինծի ներողութիւն, եւ ոտք ելայ պոչս գօտիիս մէջ անցունելով:

— Ի՞նչ, կը մեկնի՞ք, բարեկամ ... շատ բան, դեռ քառորդ մը չեղաւ գալերնիդ. նստէ՛ք, դեռ բան մ'ալ չառիք, տարեգլուխ չէ՞ այսօր:

— Այո՛, Լատինացւոց:

— Փոյթ չէ, հոս Նիւ-Եօրքի մէջ իմսի ֆուկդի խնդիր չիկայ, եւ արեւելքի փողովըդ կաղանդին օրը պատրաստած սեղանին նման մենք ալ հոս սեղան կը գար:

դարենք, եկէք հետս, պիտի տեսնաք ու վայելէք:

Եւ մեր նստած սենեկին կից մեծ սենեակ մը առաջնորդեց, ուր արդարեւ բոլորակ մեծկակ սեղանի մը վրայ բացի Պոլսեցւոց առանդական խուշէն, ամէն ինչ կար:

— Օղի ալ կա՞ր ...

— Հապա կը հարցունե՞ս ... միայն թէ եկող գացող բարեկամաց համար ... իրենք կաթին անգամ բերան չեն առներ եղեր:

— Շիտակը խօսէ, Մէփիստոփէլ, դուն ճակեցի՞ր, գոնէ փոքրիկ գաւաթ մը.

— Շիտակը ի՞նչ մեղքս պահեմ, ի տես գէրտէին եւ բէլթէին եւ անուշապուրին եւ տեսակ մը բանին, որուն անուն մը տուին անգղիարէն, այո՛, ի տես բոլոր ասոնց, քանի մը անգամ եօթը գաւաթ պարպելու պարտաւորեցայ, որու համար այնքան զըշխացած եմ որ՝ մտադրած եմ մեծին Պոլստոնի զոհ մատուցանել գործած մեղացս ի քաւութիւն եւ ի թողութիւն:

— Ո՞վ կըսէ թէ, խե՛նդ ... օղի խմելը մեղք է, բաւ է որ մարդ չափէն դուրս չենէ, չի կարդացի՞ր վերջերս թերթերը, իշտէ մեղք անոնք են, իբր սուրբ ճանչցուած մարդոց կողմէ գործուած:

— Իրաւ է, բարեկամ, շատ իրաւ է...

— Խօսքերնիդ շարունակեցէք.

— Ես չեմ յիշեր քանիերորդ գաւաթս պարպելու վրայ էի, կանխաւ հրաւիրեալք եկան եւ աւուր պատշաճի բարեմաղթութիւններէ ետք, մէջտեղ նետեցին հայերէն լրագիրներու տրցակ մը եւ սկսան ատոնց մէջ մրցանակի սրժանի հարմարեող գրուածներ փնտռել.

— Շատ գտա՞ն ...

— Շատը քիչը չեմ յիշեր, միայն սա գիտեմ թէ՝ ամէնէն աւելի հաւնուածն եղաւ վեղարաւորի մը յօդուածը.

— Տղա՛յ, ո՞ր վեղարաւորինը.

— Իշտէ նըվոր, բարեկամիդ.

— Ա՛ն ալ հակալքօղական պայքարին մէջ նետուեր է.

— Ինչո՞ւ չի նետուի, բաւական է որ թէօպէ ըրած է.

— Իրաւունք ունիք, մրցանակ ընդունեցա՞ւ.

— Փառաւորապէս.

— Զարմանալի՛ բան.

— Ծանրմ ի՞նչ կայ զարմանալու, հիմայ ան հոտէ՛ն անգամ նուազում կ'զգայ.

— Սակայն քու օղի խմելուդ շատ զարմացայ.

— Ինչո՞ւ չի խմէի, ինչպէս ըսի, օտար տեղ ի տես այն համադամ անուշգինաց, մրգեղէններու եւ նոյն իսկ եթէ իմ տեղս վեղարաւորը ըլլար, չը պիտի քաշուէր խմել, եթէ նոյն իսկ իրեն վիճակուելիք 140,000 կինէն զրկուիլն ալ գիտնար:

Գ. Փ.

— Թատերական նոր ներկայացում մը պատրաստած եմ, ի՞նչ յայտարարարութիւն փակցնելու եմ դրանը վերայ, որպէս զի ժողովուրդը հետաքրքրուի եւ թատրոնը խուռն բազմութեամբ լեցուի:

— Ատկէ դիւրին ի՞նչ կայ, յայտարարութեան վրայ գրեցէք,

«Ազատ մուտք»

X

— Մայրիկ, ամուսնանալէ առաջ սիրաբանած էք շատ:

— Անտարակոյս աղջիկս:

— Զեր սիրաբանութեանց համար պատժուած էք երբէք:

— Անգթօրէն աղջիկս, եւ պատիժներուն ամէնէն մեծը քու հօրդ հետ ամուսնանալս եղաւ:



ԿԱՂԱՆԴ ԵՒ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

- = Բարեաւ եկիր ո՛վ դու Կաղանդ աւանոր, Բեզ համար ես դրոխ կոշկիս եամաւ նոր:
- = Որ պրօքսիմ տունն տուն ու մաղթեմ միշտ, Շատ տարիներ ուրախ գուարք ու անվիշտ:
- = Այսօր կուտեմք բելքի գերեզ քաղցր ապուր, Սակայն երբեք Չղիւտեանին պէս ապուր:
- = Բայց երբ ուտես շատ շուքիս ու աղցան, Վերջն անպատճառ աղիքներեղ կառնես ձայն:
- = Ամենեկն խիստ խոժոռադեմ վարժապետ, Այսօր խնդայ խօսի խաղայ սանին հետ:
- = Նուէր տալու համար այսօր մանաւանդ, Շատ սարսափներ ալ կընդունին շա՛տ աւանդ:
- = Նշանաւորներ որոնց իրան ցեն լեցուն, Նուէր տանին գեր չորս արշըն պուշուզուն:
- = Նուէր մը կայ որ մարդ կուտայ բացարձակ, Ազգականին նըշանաւորն համարձակ:
- = Նուէր մ'ալ որ կուտան գաղտնի ու գոցեմ, Վախճալով միշտ այն պատուական տրիպոցն:
- = Նըշանաւորն համար Կաղանդ մեծ օր է, Որուն քերեմք շիֆեր խայմախ մեղր ծորէ:
- = Այսօր հարսը պիտ' հարկաւորէ անպատճառ, Իր ճասալոզ կեանք ձեռքը չիկայ ճար:
- = Ամեն քերեմք չեմ մաղթանքներ կը քալին, Այլ չի նայուիր անկեղծին ու իրքընին:
- = Այսօր օրն է օխսը տիպիկ ֆոնտային, Որ կը խըմեն առ հասարակ այր ու կին:
- = Օխսը ռախին Կաղանդն է որ կը քերէ, Գիտ մեկ օր մը Տեար Թալշանճեան կը ներէ:
- = Ձեռք պագնելու ձեռք տեղմելու օր է այս, Որուն անշուշտ պիտ' բարկանայ Տեար Նայրաս:
- = Եւ քանի որ այսօր, օր է մաղթանայ, Իմ ալ մաղթանքս կընեմ արձակ բացէ բաց:

Ուրեմն կը մաղթեմ որ գոնէ մինակ այս տարի Իզմիրեանց մրցանակի կտորուանքներէ կտոր մը շնորհուի իմ սիրազեղ (հոմանիշ ծուածեղին, կամ ձու-հաց-եղին, եւ կամ ձու — Ա. շաղկապ — զեղին) եւ սիրելա-գոյն բարեկամցուիս Պառոն Էտուառ Թօլայի, որպէս զի կուտաւորուի եւ կարող ըլլայ Բերայի ամէն փողոցները համարձակ ու ճա-կատաբաց պըտըտիլ (ըստ վկայութեան ան-ձին իւրոյ):

×

Կը մաղթեմ որ բարեսէր կամ բարե-գործասէր անձ մը կամ անձնաւորութիւն մը, հաճի եւ բարեհաճի իմ ընտրեալգոյն բարեկամիս Տիար Թորոսեանց Գիրգորիկին՝ նուիրել մէկ տարեկան երկաթուղիատոմսակի (բարդ-բառ) ապօքման մը իր ամենօրեայ երթեւեկութեան համար ի Պատրիարքարան Հայոց:

×

Կը մաղթեմ այս շնորհաւոր նոր տարւոյն 12 ամսուն 52 շաբաթուան եւ 365 օրուան ընթացքին մէջ գտնէ իր մխիթարութիւնը այն հովիւը որ յոտեցին իր հօտէն հոտելուն համար, զրկելով զինքն գէթ վերջին հոգե-կան կամ մանուանդ մարմնական ու նիւ-թական մխիթարութենէն:

×

Կը մաղթեմ որ այս տարի մեր քահանա-յից հասոյթի նոր դուռ մը բացուի, վասն զի ապրելու համար մեռել չըկայ այլ եւս, քանի որ Լիբանանցի տաղանդամեծ Հիթօկ-րատեան մը գտաւ մասածով մեռել ողջնցը-նելու գիւտը:

×

Վերջապէս կը մաղթեմ ամէն երջանկու-թիւն ամէն ծանօթից եւ անծանօթից իմոց կենդանեաց, քանի որ ասոր համար մէթա-լիկ մը ծախք չունիմ:

Բանաստեղծս առաջին կարգի (*)

ՍԿԷԼՈՒՐ

ԵՐԾՈՒԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

(*) Կը խնդրուի թիւրիմացութեամբ չո-գենաւի մէկքի չը հասկնալ:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԽԱՍԳԻՒՂ. — Օրիորդ Տաքէսեան իր գերդաստանէն ժառանգ մնացած և ժամանակին մեր եկեղեցիին նուիրած, և այս օր 900 ոսկիի արժողութիւն ունեցող, Ս. Կարապետի մասունքը ետ կ'ուզէ կամ փարայ կուզէ:

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ. — Հրաման: Նըւէրը ետ չառնուիր: Մասունքը ետ չի տրուիր: Հանրային օգնութիւն կրնայ ակնկալել:

ԳԱՏԸ-ԳԻՒՂ. — Արամեան վարժարանի համար դաստիարակ ուսուցիչ մը կը փնտռուի, որ մասնագէտ ըլլայ Հայերէնի, Ֆրանսերէնի և Թուրքերէնի, ամսական թոշակն 150 դրշ. որուն 30 փարան կը պատկանի ուսուցչաց օգնութեան սնտուկին: (Այս պաշտօնը 149 դրուշ 10 փարայով յանձն առնողը կընայ դիմել խմբագրատունս:

ԻԶՄԻՐ. — Վաղինակին ինքնութիւնը հասկնալու համար, Պոլսէն հասած նամակներուն չպիտի կարենանք պատասխանել:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Հանրագիտակի տարեկան բաժանորդագին մը վճարողին լիուրի տեղեկութիւն կը տրուի Վաղինակի նկատմամբ:

ԶՈՒԽԱՃԻ ԽԱՆ. — Զմեռնամուտի առթիւ կարգ մը նախանձոտ զրպարտիչներ փոխանակ սալօններու մէջ խաղալու, կարգ մը պատուաւոր անձնաւորութեանց պատիւին հետ խաղալուն հետեւանօք, մէկուն ոտքը կոտրեր ուրիշի մըն ալ դէմքը ձեռքերը ալրեր են: (Նախախնամութեան մատը տեսա՞ք ինչ կ'ընէ: Ծ. Խ.)

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ. — Ելմտից տեսչին ամսաթոշակին հաշիւը հետեւեալն է.

Ասկէ առաջ 1000 դրշ

Ետքը զեղչուած 500 ”

Զուտ ամսական 500 ”

Արկղակալի պաշտօնը ջնջուելով, ասոր յատուկ ամսական գումարը յատկացուած ելմտից տեսչին

500 դրշ

Գումար 1000 ”

Ելմտից տեսչին կողմէ ամսականի յաւելման խնդիրը մերժուեցաւ:

Զ Ե Կ Ո Յ Յ

Յաջորդ թուով պիտի հրատարակուի ԲԱՆԱՍՏԵՂԾՆ ԵՒ ԻՐ ԵՐԳԸ, ՎԸԾ-ՏԱԿՑԱԿԱՆ ՆԻԼԹՈՎ, որ մեր Ամենասիրելի և Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր սիրական ու պատուական Գրով մահուան յիշատակին ի պատիւ նուիրուած է բանաստեղծական լեզուին բոլոր գեղեցկութիւններով, և նիւթին վեհութեան համապատասխանող վսեմ ու չքեղ ոճով մը, վառվառուն զգացումներով ու երեւակայութեան բոլոր գունագեղ ճոխութիւններով զարգարուած է: Կրկին ու կրկին կարդալու, և մէն մի տողը գոց սովորելու չափ խնամոտ ուշադիր ընթերցման արժանի է:

Արտատպէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճատտեսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱԹՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ Զգուտ մանդային մասերն եզան մսին, ուղեղին, ողնուղեղին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պարիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Զինու համաբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անխորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անխորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով:

50—23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՏԵՐԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հանամ, Թօփաքեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և դիմացկուն ֆաբրիկաներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—18

Խ. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՊԱՐԻ ԴԱՍԱՏՈՒ

Ներկայ ձմեռուան առթիւ ընտանեկան երեկոյթներու անհրաժեշտ պարը քիչ ժամանակուան մէջ ուսանելու փափաքողը կրնան դիմել իրենց բերա, ԿալաթաՍէրայի դէմ Սիթէ տը Բերայի մէջ թիւ 11. Պոլսոյ կողմ Մեծ Շուկայ, Գալաթաքճըլարի դուռը, ֆէսճի Սեպուհ աղայի խանութը:



Կ. ԵԱՎՐՈՒԷԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԷԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԻՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԻՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, քրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամզա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէն, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, դետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիտիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն զգուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-14

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։